ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, վրացական օրթոդոքս եկեղեցու հրավերով, ընկերակցությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանի և Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վարդապետ Արաքաջյանի, մեկնեց Թբիլիսի՝ հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու մասնակցելու Հանձն Վրաստանի նորընտիր կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Իլիայի գահակալության հանդիսությանը:

Թբիլիսիի երկաթուղային կայարանում նորընտիր Տ. Իլիա կաթողիկոսը, ընկերակցությամբ վրաց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և վրահայոց թեմի թեմական առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի, դիմավորեց Հայոց Հայրապետին: Կայարանում Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթեց նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Տենգիզ Օնոպրիշվիլին:

Դեկտեմբերի 25-ին, կիրակի օրը, առավոտյան, Մցխեթայի պատմական վանքի տաճարում տեղի ունեցավ Տ. Իլիա կաթողիկոսի գահակալության հանդիսավոր արարողությունը: Այս առթիվ Նորին Սրբություն Հայոց Հայրապետը, հանուն հայ եկեղեցու, հանդես եկավ ողջույնի ուղերձով՝ սրտագին շնորհավորանքներ և մաղթանքներ ուղղելով նորընտիր երիտասարդ կաթողիկոսին:

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, ռուս պրավոսլավ եկեղեցու, հայ առաքելական եկեղեցու և վրացական օրթոդոքս եկեղեցու Հովվապետները պաշտոնական այցելություն տվեցին Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Պավել Գիլաշվիլուն: Տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց:

Դեկտեմբերի 24-ին, երեկոյան, Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Հավլաբարի սուրբ Էջմիածին եկեղեցի, այնուհետև Թբիլիսիի հայոց սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում մասնակցեց կիրակամտի ժամերգությանը և Իր հայրապետական օրհնությունները բաշխեց տեղի հայ հավատացյալ ժողովրդին:

Դեկտեմբերի 26-ի երեկոյան Հայոց Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
29 դեկտեմբեր 1977 թ.